**Ստորև էլեկտրոնային առաջին նամակն է Login Link/մուտքի հղում ստանալու վերաբերյալ ցուցումներով, որը Դուք ստանում եք BallotPoint-ի կողմից: Ձեր Login Link/մուտքի հղումը պահանջելուց հետո BallotPoint-ի կողմից կստանաք էլեկտրոնային երկրորդ նամակը:**

Էլեկտրոնային նամակի թեման՝ SEIU Voting Instructions/Քվեարկության վերաբերյալ ցուցումներ

SEIU կոնվենցիայի քվեարկության համակարգ

# SEIU Vice President Election /Փոխնախագահի ընտրություն

[ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ]

BallotPoint Election Services-ը անցկացնում է **SEIU Vice President Election/ Փոխնախագահի ընտրությունը** համացանցի միջոցով:

Քվեարկությունը բացվում է [ամսաթիվ և ժամ] ET (Արևելյան ժամանակային գոտի) և փակվում է էլեկտրոնային նամակը ստանալուց 7 օր հետո: (Խնդրում ենք քվեարկության բացման և փակման ճշգրիտ ամսաթվի և ժամի մասին տեղեկությունը նայել էլեկտրոնային նամակում): Խնդրում ենք կատարել ձեր ընտրությունը նախքան քվեարկության փակումը:

**Քվեարկության մասին ցուցումներ**

Անվտանգության նպատակներից ելնելով՝ Դուք պետք է BallotPoint-ից պահանջեք մուտքագրվելու և այս ընտրությունում քվեարկելու մասին էլեկտրոնային նամակ: Սեղմելով էլեկտրոնային պատասխան նամակի մեջ

առկա հղման վրա և մուտքագրելով էլեկտրոնային նամակում ցուցադրված կոդը՝ մուտք կգործեք քվեարկության համակարգ, կցուցադրվի Ձեր քվեաթերթիկը և Ձեզ կթույլատրվի կատարել Ձեր քվեարկությունը:

Ձեր էլեկտրոնային փոստի հաշվին մուտքագրման հղում ստանալու համար.

1. Սեղմե՛ք հետևյալ հղման վրա, որպեսզի կարողանաք մուտք գործել BallotPoint քվեարկության համակարգ՝ https://ballotpoint.com/convention/seiu ,

2. Սեղմե՛ք գլխավոր էջի կենտրոնական հատվածի մոտ առկա ***OBTAIN LOGIN LINK/ՍՏԱՆԱԼ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՀՂՈՒՄ*** կոճակի վրա,

3. Մուտքագրե՛ք Ձեր **Delegate ID/Պատվիրակի նույնականացման համարը (Ձեր Delegate ID-ի մասին տեղեկություն գտե՛ք էլեկտրոնային նամակում**) և սեղմե՛ք ***Continue***/***Շարունակել*** կոճակի վրա,
4. Մուտքագրե՛ք կոնվենցիայի Ձեր գրանցման էլեկտրոնային հասցեն երկու դաշտում էլ և սեղմե՛ք ***Send Me a Login Link Now/Այժմ ուղարկել ինձ մուտքագրման հղում***,
5. Մոտ մեկ րոպեի ընթացքում notify@ballotpoint.com-կողմից կստանաք էլեկտրոնային նամակ,
6. Բացե՛ք էլեկտրոնային նամակը և հետևե՛ք քվեարկության համակարգ մուտք գործելու ցուցումներին,
7. Մուտք գործելուց հետո Ձեր քվեն ուղարկելու համար հետևե՛ք էկրանի ցուցումներին:

**Ծանոթագրություններ.**

Էլեկտրոնային նամակը, որը Դուք կստանաք, վավեր է 10 րոպե: Եթե չեք կիրառել էլեկտրոնային նամակը 10 րոպեի ընթացքում կամ անհրաժեշտ է նորից մուտք գործել, ապա կրկնե՛ք վերևում նշված քայլերը:

Եթե մի քանի րոպեների ընթացքում չստանաք էլեկտրոնային նամակ, փորձե՛ք թարմացնել Ձեր էլեկտրոնային փոստի ծրագիրը և ստուգե՛ք ոչ կարևոր (spam)/ոչ ցանկալի (junkmail) թղթապանակները: Եթե Դուք, այնուամենայնիվ, չեք ստացել էլեկտրոնային նամակ, ապա հնարավոր է՝

սխալ եք մուտքագրել Ձեր տվյալները: Կրկնե՛ք վերը նշված քայլերը և ուշադրությամբ մուտքագրե՛ք Ձեր տվյալները:

**Բոլոր հարցերի համար դիմե՛ք.**

SEIU's Roll Call Committee/Ուղղորդող հանձնաժողովին
rollcall@seiu.org

(202) 730-7056 և թողեք հաղորդագրություն

Խնդրում ենք չպատասխանել այս էլեկտրոնային նամակին, քանի որ հետադարձ հասցեն չի վերահսկվում:

---

**Ստորև էլեկտրոնային երկրորդ նամակն է, որը Դուք կստանաք BallotPoint-ի կողմից էլեկտրոնային առաջին նամակում նշված քայլերը կատարելուց հետո: Ստորև ներկայացված էլեկտրոնային նամակում կա հղում և Ballot Code/Քվեաթերթիկի կոդ, որպեսզի կարողանաք մուտք գործել և քվեարկել:**

Էլեկտրոնային նամակի թեման` BallotPoint քվեարկության համակարգ մուտք գործելու հղում և Ballot Code/քվեաթերթիկի կոդ

Ձեր պահանջով ստորև ուղարկված հղումը և Ballot Code/քվեաթերթիկի կոդը հարկավոր է կիրառել BallotPoint քվեարկության համակարգ մուտք գործելու համար:

Հղումն անվավեր կլինի 10 րոպեից:

Ձեր Ballot Code/քվեարկության կոդն է` << #### >>

https://mrns.ballotpoint.com/Auth/EnterBallotCode.cfm

Հղման վրա սեղմելուց հետո ավտոմատ կերպով կուղղորդվեք BallotPoint քվեարկության համակարգ: Հուշում ստանալուց հետո մուտքագրե՛ք Ballot Code/քվեաթերթիկի կոդը:

Եթե Ballot Code/քվեաթերթիկի կոդը վավեր է, Դուք ինքնաբերաբար մուտք կգործեք BallotPoint քվեարկության համակարգ, որպեսզի կարողանաք «SEIU Vice President Election/փոխնախագահի ընտրությունում» քվեարկել Ձեր տեղամասից, եթե իհարկե արդեն չեք քվեարկել այդ ընտրությունում Ձեր տեղամասից:

Եթե Ձեզ անհրաժեշտ է հավելյալ օգնություն, խնդրում ենք ուղարկել էլեկտրոնային նամակ SEIU's Roll Call Committee/Ուղղորդող հանձնաժողովին rollcall@seiu.org հասցեով:

Խնդրում ենք չպատասխանել այս էլեկտրոնային նամակին. ուղարկողի էլեկտրոնային փոստի հաշիվը չի վերահսկվում պատասխանների համար:

---

**Ստորև քվեաթերթիկի մասին ցուցումներն են: Էլեկտրոնային երկրորդ նամակի մեջ առկա հղմամբ քվեաթերթիկ մուտք գործելուց հետո Դուք կտեսնեք քվեաթերթիկը՝ քվեաթերթիկի վերաբերյալ ցուցումներով:**

Քվեաթերթիկի վերաբերյալ ցուցումներ

**Որևէ թեկնածուի օգտին քվեարկելու համար նշե՛ք նրա անվան դիմացի դաշտը: Vice President/Փոխնախագահի պաշտոնի համար կարող եք կողմ քվեարկել թեկնածուների ցուցակին կամ ընտրել «no slate/թեկնածուների ոչ մի ցուցակ»: Եթե կողմ եք քվեարկում որևէ թեկնածուների ցուցակի, ապա այդ ցուցակի անդամներն ինքնաբերաբար նշվում են Ձեր քվեաթերթիկում: Եթե ընտրում եք «no slate/թեկնածուների ոչ մի ցուցակ», ոչ մի անուն ավտոմատ կերպով չի նշվում Ձեր քվեաթերթիկում: Եթե ընտրում եք «no slate/թեկնածուների ոչ մի ցուցակ», ապա պետք է նշեք բոլոր այն թեկնածուների անունների դիմաց գտնվող դաշտերը, ում օգտին ցանկանում եք քվեարկել:**

**Եթե Դուք կողմ եք քվեարկում որևէ ցուցակի, բայց ցանկանում եք նաև քվեարկել այդ ցուցակից դուրս թեկնածու(ներ)ի օգտին, ապա կարող եք հեռացնել նշումը այն թեկնածու(ներ)ի անվան դիմացի դաշտից, ում օգտին չեք ուզում քվեարկել, և նշել այն թեկնածու(ներ)ի դաշտը, ում օգտին ցանկանում եք քվեարկել:**

**Երբ ավարտեք քվեարկությունը, սեղմե՛ք Cast Ballot/Հանձնել քվեաթերթիկը կոճակի վրա: Էկրանին կտեսնեք հաստատումը և կստանաք հաստատման մասին էլեկտրոնային նամակ:**

**Եթե ցանկանում եք ավելի ուշ քվեարկել, էկրանի անկյունում սեղմե՛ք Cancel Vote/Չեղարկել քվեն և Log Out/Դուրս գալ կոճակների վրա: Հաստատե՛ք Ձեր ցանկությունը, որ չեք ցանկանում քվեարկել, կամ սեղմե՛ք Return to Ballot/Վերադառնալ քվեաթերթիկին: Եթե չեղակում եք Ձեր քվեն, ապա նոր քվեաթերթիկ ստանալու համար պետք է կրկնեք քվեարկության ամբողջ գործընթացը:**

**Ստորև էլեկտրոնային երրորդ նամակն է, որը Դուք կստանաք BallotPoint-ի կողմից ի հաստատումն Ձեր քվեի:**

Էլեկտրոնային նամակի թեման՝ BallotPoint քվեարկության հաստատում

Ձեր անուն, ազգանունը

Այս ավտոմատ հաղորդագրությունը Ձեզ է ուղարկվել BallotPoint Election Services-ի կողմից՝ SEIU Roll Call Committee/Ուղղորդող հանձնաժողովի անունից:

Ձեր տեղամասից ընտրության համար (SEIU Vice President Election/փոխնախագահի ընտրություն) համացանցով ուղարկված քվեաթերթիկն արձանագրվել է (մանրամասները՝ էլեկտրոնային նամակում):

Եթե այս հաղորդագրությունը ստացել եք սխալմամբ, խնդրում ենք անմիջապես կապ հաստատել SEIU Roll Call Committee/Ուղղորդող հանձնաժողովի հետ rollcall@seiu.org հասցեով: Հակառակ դեպքում, ՈՉ մի գործողություն չի պահանջվում:

Խնդրում ենք ՉՊԱՏԱՍԽԱՆԵԼ այս հաղորդագրությանը: Էլեկտրոնային նամակ ուղարկողի փոստարկղը չի վերահսկվում պատասխանների համար: